ի պատասխան 2023 թ. օգոստոսի 9-ի N 34/14.2/20580-2023 Ձեր գրության՝ հայտնում ենք, որ «Համագործակցային կրթական ծրագրեր» ՀԿ-ի՝ Լուսինե անունով ներկայացուցիչը 2022 թ. նոյեմբերին զանգահարել է գիտահետազոտական մեր կենտրոն և որոշ հարցեր ուղղել Երերույքի տաճարի վերաբերյալ՝ միաժամանակ հանդիպում խնդրելով տնօրենի հետ: Գիտահետազոտական մեր կենտրոնի աշխատակիցը խնդրել է հարցերը գրավոր դիմումի ձևով ձևակերպել՝ նշելով նաև հանդիպման ցանկությունը: Նոյեմբերի 18-ին էլեկտրոնային փոստով ստացվել է գրավոր դիմումը՝ նշյալ ՀԿ-ի տնօրեն Լուիզա Թոփչյանի անունից (կցվում է), որի մեջ միանգամից նշվել են հանդիպման օր և ժամ: Պատմամշակութային ժառանգության

գիտահետազոտական կենտրոնի տնօրենի օգնական Վարսիկ Սիմոնյանը, ի պատասխան տվյալ նամակի, առաջարկել է հանդիպման այլ օր և ժամ (կցվում է նամակագրությունը), որը սակայն չեն դիտարկել նշյալ ՀԿ-ի ներկայացուցիչները: Նկատենք, որ ՀԿ-ի ներկայացուցիչ Լուսինեն և տնօրենի օգնական Վարսիկ Սիմոնյանը պարբերաբար կապի մեջ են եղել հեռախոսով, սակայն այլ օր և ժամ այդպես էլ չի դիտարկվել, որի հետևանքով էլ հանդիպումը պարզապես չի կայացել:

0010, Երևան, Փավստոս Բուզանդի 1/3, Հեռ/ Tel/Тел (37410/011) 52-66-18, ֆաքս /факс/fax (37410) 52-87-97
Yerevan 0010, 1/3 P.BUSAND, 375010, Ереван, ул. П. Бузанда 1/3
Էլ-փոստ /Эл.почта/E-mail: armheritage@gmail.com

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ վարչապետի աշխատակազմին հասցեագրած նամակում, մեղմ ասած, բոլորովին անհիմն է ՀԿ-ի տնօրեն Լուիզա Թոփչյանի այն պնդումը, թե «պետական ոչ առևտրային կազմակերպությունն աշխատում է փակ ռեժիմով և անհաղորդ է»:

Առդիր՝ 1 PDF ֆայլ:

Հարգանքով՝

Տնօրեն՝ ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Վ. Սիմոնյան
Հեռ.՝ 010 526618

Therefore, we sent our remarks, in written form, to Khachik Harutyunyan personally and Alfred Kocharyan, the Deputy Minister of the ESCS, attaching also our previous correspondence with the employee of the “Scientific Research Centre for Historical and Cultural Heritage” SNCO.

Հարգելի պարոն Հարությունյան,
ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ պարոն Քոչարյանի N 34/14. 2/20580-2023 գրությանն ուղղված Ձեր պատասխանը պարունակում է, մեղմ ասած, անճշտություններ մեր կազմակերպության դիմումի վերաբերյալ:
Քանի որ Ձեր ղեկավարած ՊՈԱԿ-ի աշխատակցի հետ մեր կազմակերպության ներկայացուցիչ՝ Լուսինե Թոփչյանի պայմանավորվածությունների մեծ մասը եղել է հեռախոսային զանգով, ոչ գրավոր տարբերակով, ուստի խնդիր է, Ձեր կողմից իրողությունների վերաբերյալ ոչ համապատասխան մեկնաբանությունները:
Ձեր աշխատակիցը չի խնդրել հարցերը գրավոր դիմումի ձևով ներկայացնել, այլ պարզապես նշել է, որ Ձեզ հետ հանդիպման համար անհրաժեշտ է միայն հանդիպմանը ուղղված դիմում, որը ստանալուց հետո Ձեր աշխատակիցը, որևէ առարկություն չի ներկայացրել դիմումի բովանդակության թերի լինելու վերաբերյալ, ինչը հստակ երևում է նրա պատասխան նամակում, հետևաբար պնդումը, որ Ձեր աշխատակիցը խնդրել է հարցերը գրավոր դիմումով ձևակերպել, չի համապատասխանում իրականությանը:
Քանի որ հեռախոսազրույցի ընթացքում Ձեր աշխատակիցը հստակ չէր նշել, թե ո՞ր օրերին է Ձեզ հարմար հանդիպել, ուստի իմ դիմումի մեջ, ես առաջարկեցի համապատասխան օր և ժամ, որը միանշանակ ենթակա էր քննարկման: Այսինքն՝ միանգամից ոչինչ տեղի չի ունեցել, ինչպես նշված է Ձեր պատասխանում:
Ձեր պատասխանում սխալ է նաև այն պնդումը, որ ի պատասխան մեր նամակին, Ձեր օգնական՝ Վարսիկ Սիմոնյանի առաջարկած հանդիպման օրը և ժամը չի դիտարկվել մեր կողմից, քանի որ Ձեր աշխատակցի կողմից ուղարկված պատասխանի հենց նույն օրը մեր ներկայացուցիչ՝ Լուսինե Թոփչյանը գրել է պատասխան նամակ, որտեղ առաջարկել է կազմակերպել հանդիպում կենտրոնի որևէ այլ աշխատակցի հետ, ով պատմամշակութային կոթողների վերականգնման աշխատանքները կազմակերպելու մասնագետ է: Այս ամենը հստակ երևում է մեր պատասխան նամակում: Այս պատասխանից հետո Ձեր ղեկավարած գիտահետազոտական կենտրոնը մինչև օրս որևէ արձագանք չի տվել, այդ թվում նաև հեռախոսազանգի միջոցով, ինչն էլ տալիս է հիմնավոր պատճառ արձանագրելու, որ <<Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ն աշխատում է փակ ռեժիմով և անհաղորդ է:
Մեր կողմից բարձրաձայնվող հարցերի շրջանակը չէր վերաբերվում միայն Երերույքի տաճարին, այլ նաև Ջիթհանքովի 19-րդ դարի ձիթհանի մասին էր:
Նշեմ, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի իմ հարցմանն ուղղված N 34/14. 2/26229-2023 պատասխանում ասվում է, որ ՀՀ պետական բյուջեի <<Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում>> միջնաժամկետ ծախսային ծրագիրը ձևավորվում է ըստ <<Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի աշխատակիցների մշտադիտարկման արդյունքում կազմված հուշարձանների վթարայնության աստիճանի վերաբերյալ ցուցակի, ինչպես նաև նախարարության վարած քաղաքականության և առաջնահերթությունների համապատասխան: Հաշվի առնելով վերոգրյալը և այն փաստը, որ Ջիթհանքովի 19-րդ դարի ձիթհանը շարունակում է գտնվել, մեղմ ասած, անմխիթար վիճակում, ուստի կխնդրեմ ուղարկել այն բոլոր հետազոտությունների արդյունքները, որոնք իրականացվել են <<Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից վերոնշյալ պատմամշակութային կոթողի վերաբերյալ:
Ի դեպ կարևոր է նշել, որ Ջիթհանքովի 19-րդ դարի ձիթհանն ընդգրկված է ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Հարգանքով՝
<<Համագործակցային կրթական ծրագրեր>> հկ-ի նախագահ՝
Լուիզա Թոփչյան

Դիմում Inbox ×

**Collaborative Educational Projects** <cep.edu.org@gmail.com>  Fri, Nov 18, 2022, 5:10 PM
to armheritage

«Պատմամշակութային Ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն» ՊՈԱԿ-ի հարգելի աշխատակիցներ,
Կից ֆայլում դիմում է հասցեագրված «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Յարությունյանին:

Յարգանքով՝
<<ՅԿԾ>> հկ տնօրեն՝
Լուիզա Թովչյան

--
*Best regards,*
*'Collaborative Educational Projects' NGO*
*+374 99 89 03 98*
*info@cep-org.am*
*cep.edu.org@gmail.com*
*Yerevan, Armenia*

**One attachment** • Scanned by Gmail



**Armenian Heritage** <armheritage@gmail.com>  Nov 21, 2022, 10:25 AM
to me

Translate to English

Բարև Ձեզ, Լուսինե ջան: Յանդիպման համար մեր տնօրենին այս շաբաթվա մեջ հարմար է միայն ուրբաթ օրը՝ ժամը 11-ին: Եթե հարմար է Ձեր տնօրենին, խնդրում եմ գրել կամ զանգել: Ես զանգեցի, չպատասխանեցիք:
Յարգանքով՝ Վարսիկ:

пт, 18 нояб. 2022 г. в 17:10, Collaborative Educational Projects <cep.edu.org@gmail.com>:

--

**Collaborative Educational Projects** <cep.edu.org@gmail.com>  Nov 21, 2022, 10:57 AM
to Armenian

Ողջույն, Վարսիկ ջան: Պարտադիր չէ այսօրվա հանդիպումը 16:30_ին լինի տնօրենի հետ, կարող ենք հանդիպել կենտրոնի որևէ աշխատակցի հետ, ով պատմամշակութային կոթողների վերականգնման աշխատանքները կազմակերպելու մասնագետ է: Ի դեպ ուզում եմ նշել, որ մենք չենք դիմում ԱՄՆ դեսպանատան հայտարարած դրամաշնորհին, հետևաբար մեզ՝ որպես մրցակից մի դիտարկեք: Կսպասեմ Ձեր պատասխանին:

Յարգանքով՝
Լուսինե

Reply  Forward

Besides clarifying the wrong interpretations of the facts by Khachik Harutyunyan, director of the "Scientific Research Centre for Historical and Cultural Heritage" SNCO, it was important to return to the main issue, namely the poor condition of the 19th-century oil mill in Dzithankov, so in our

answer, citing the observation of Alfred Kocharyan, the Deputy Minister of the Ministry of ESCS of the Republic of Armenia that the medium-term expenditure program "Fixing, repairing and restoring monuments" is formed in accordance with the list of the level of emergency of the monuments compiled in the monitoring results of the employees of the "Scientific Research Centre for Historical and Cultural Heritage" SNCO, as well as in accordance with the policy and priority of the Ministry, therefore, we asked to send the results of all the researches that were carried out by the "Scientific Research Centre for Historical and Cultural Heritage" SNCO regarding the above-mentioned historical-cultural monument.

It should be noted that this time also the answer of Khachik Harutyunyan, director of the "Scientific Research Centre for Historical and Cultural Heritage" SNCO, surprised us. Not only did he not respond to our inquiry about the 19th-century oil mill research, he also accused us of not knowing the administrative regulations of the SNCO he leads and not conducting our inquiry according to those regulations, but no employee from that structure had provided us their working regulations. Mr. Harutyunyan was also worried by our observation that the organization he is in charge of, is working in an 'unconnected and closed mode.' Therefore, we considered it important to substantiate the reason for our observation and return to the actual question again, this time in the format of an application, as Mr. Harutyunyan preferred.

SCIENTIFIC RESEARCH CENTER <armheritage@gmail.com> Mon, Oct 16, 4:11PM

to me

Translate to English

«Համագործակցային կրթական ծրագրեր» ՀԿ

նախագահ՝ Լուիզա Թոփչյանին

Հարգելի՛ տիկին Թոփչյան,

Գիտահետազոտական մեր կենտրոնն աշխատում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային բազմաթիվ կառույցների հետ, հայաստանյան պետական և ոչ պետական գիտական, կրթական կազմակերպությունների, նյութական և ոչ նյութական ժառանգությունն ուսումնասիրող հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կառուցների կամ անհատների հետ: Երբևէ մեզ «անհաղորդ և փակ ռեժիմով» աշխատելու «մեղադրանք» չի եղել և չի կարող լինել: Ուստի՝ հորդորում ենք Ձեզ պահպանել զսպվածություն, ձեռնպահ մնալ մեր աշխատանքն անհարկի պիտակավորելուց և Ձեր հարցերն ուղարկել բացառապես գրավոր տարբերակով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ մեր կենտրոնի որևէ աշխատակցի աշխատանքային պարտականությունների մեջ քաղաքացիների ընդունելություն նախատեսված չէ, սակայն եթե Ձեր մեջ մեր կենտրոնի աշխատակիցներին հանդիպելու ցանկություն էր առաջացել, ապա այդ ևս կարելի էր կազմակերպել մինչ այս առանց որևէ խնդրի, որը ցավոք, հնարավոր չի եղել: Մենք միայն սիրով ենք կատարել և կատարում մեր աշխատանքը՝ ողջունելով ժառանգության պահպանությամբ մտահոգ տարբեր կազմակերպությունների և անհատների հետ համագործակցությունը:

Հարգանքով՝

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ

пт, 13 окт. 2023 г. в 11:14, Collaborative Educational Projects <cep.edu.org@gmail.com>:

Collaborative Educational Projects <cep.edu.org@gmail.com> Oct 17, 2023, 1:00 PM

to SCIENTIFIC

Հարգելի պարոն Հարությունյան,

Ձեր ղեկավարած պետական ոչ առևտրային կազմակերպությանը <<Անհաղորդ և փակ ռեժիմով>> աշխատելու իմ կողմից արված դիտարկումը, ոչ թե <<մեղադրանք>> է, ինչպես Դուք եք որակել, այլ Ձեր ղեկավարած կազմակերպության, կոնկրետ այս հարցով, գործելաոճի հետևանք, որի հիման վրա էլ ձևավորվել է համապատասխան կարծիքը:

Բացի այդ մինչև հորդորներ հղելը, լավ կլիներ, որ ի սկզբանե տեղեկացնեիք, նշեիք, թե ինչ հստակ ընթացակարգ և համապատասխան ձևաչափ է սահմանված <<Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ին հարցեր ուղղելու համար: Ի դեպ նշեմ, որ Ձեր ղեկավարած ՊՈԱԿ-ը չկա https://e-request.am/ հարթակում, որպեսզի հնարավոր լիներ անհրաժեշտ ձևաչափով ուղարկել հարցումը:

Ձեր աշխատակիցը մեր ներկայացուցչի հետ հենց առաջին հեռախոսազրույցի ընթացում կարող էր նշել, որ Ձեր ղեկավարած կազմակերպության որևէ աշխատակցի աշխատանքային պարտականությունների մեջ քաղաքացիների հետ ընդունելություն նախատեսված չէ, թեպետ անհասկանալի է, թե ինչ հիմնավորմամբ, անհրաժեշտության դեպքում, նման հանդիպումներ նախատեսված չեն:

Ձեր այս նամակում Դուք եք նշում, որ հանդիպում հնարավոր չի եղել կազմակերպել, սակայն ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանին ուղղված Ձեր պատասխանում գրել էիք, որ մեր կազմակերպությունը չի դիտարկել Ձեր աշխատակցի առաջարկը: Ուստի խնդրում եմ, այսուհետ զերծ մնալ անհիմն պնդումներից և հարցերին պատասխանել ըստ էության:

Ողջունելի է, որ նշում եք անհատների և կազմակերպությունների հետ համագործակցության պատրաստակամության մասին, հուսամ, ի վերջո, գործնականում մենք դա կտեսնենք:

Կից ուղարկում եմ Ջիթհանքովի 19-րդ դարի ձիթհանին առնչվող հարցերը գրավոր տարբերակով՝ ստորագրված և կնքված, ինչպես ցանկացել եք:

Հարգանքով՝ <<Համագործակցային կրթական ծրագրեր>> հկ-ի նախագահ՝ Լուիզա Թոփչյան

One attachment • Scanned by Gmail

<<Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն>>
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Հարությունյանին
<<Համագործակցային կրթական ծրագրեր>>
հասարակական կազմակերպության
նախագահ՝ Լուիզա Թոփչյանից

## Դիմում

Խնդրում եմ տրամադրել այն բոլոր հետազոտությունները Ջիթհանքովի 19-րդ դարի ձիթհանի վերաբերյալ, որոնք իրականացրել է <<Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն>> ՊՈԱԿ-ը: Եթե կան Ջիթհանքովի 19-րդ դարի ձիթհանի նախնական տեսքը ցույց տվող վիզուալ պատկերներ, ինչպես նաև վերականգնմանն առնչվող ճարտարապետական, ճարտարագիտական նյութեր, ապա նույնպես տրամադրել:

Վերոնշյալ կոթողի վերականգնմանն ուղղված աշխատանքներում ի՞նչ լիազորություններ ունի <<Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն>> ՊՈԱԿ-ը:

Նաև կխնդրեմ նշել, թե արդյո՞ք <<Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն>> ՊՈԱԿ-ը ունի մասնագետներ, ովքեր կարող են մշակել պատմամշակութային կոթողի վերականգնման ծրագիր՝ այդ թվում ստանալ ձիթհանի նախնական տեսքի 3D մոդելավորումը:

In Mr. Harutyunyan's answer, there was no information about the research conducted on the 19th-century oil mill of Dzithankov village, which is a historical and cultural monument. What could it mean that the “Scientific Research Centre for Historical and Cultural Heritage” SNCO did not carry out any necessary research, on the basis of which the restoration works of the monument could begin?

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
"SCIENTIFIC RESEARCH CENTER OF
THE HISTORICAL AND CULTURAL
HERITAGE" SN-CO

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
"НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ
ЦЕНТР ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО
НАСЛЕДИЯ" ГНКО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

N 01/405 23 հոկտեմբերի 2023թ.

Համագործակցային կրթական ծրագրեր»
հասարակական կազմակերպության նախագահ
տիկին ԼՈՒԻԶԱ ԹՈՓՉՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Թոփչյան,

ի պատասխան 22 Շիրակի մարզի Ձիթհանքով գյուղի XIX դ. ձիթհանի մասին 17.10.2023 թ. Ձեր դիմումի՝ հայտնում ենք, որ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվային տվյալներով գյուղում պահպանվել են XIX դ. թվագրվող երկու ձիթհանի ավերակներ: Դրանք գտնվում են գյուղի արևելյան մասում և ընդգրկվել են Շիրակի մարզի պատմամշակութային անշարժ հուշարձանների պետական ցուցակ՝ 7.72.11 (XIX դ.) և 7.72.12 (1892 թ., Արշակ Գևորգյանի տան մոտ) ցուցիչներով: Ձեր դիմումում հստակեցված չէ, թե որ ձիթհանի մասին է խոսքը: Ենթադրելի է, որ խոսքը գնում է 1892 թ. ձիթհանի մասին, որտեղ պահպանվել է տրորող քարը՝ սռնիով: Վերջինս ունի 1989 թ. կազմված վկայագիր, կից՝ հատակագիծ և սև-սպիտակ լուսանկարներ, որոնք, ցավոք, այնքան էլ որակով չեն: Այն ունի նաև պահպանական գոտի (2011 թ.)՝ համաժամանակյա գունավոր լուսանկարներով: 7.72.11 պետ. ցուցիչով ձիթհանի վկայագրում (1983 թ.) լուսանկարներ չկան:

Ցանկության դեպքում վերոնշյալ նյութերը կարող են տրամադրվել սահմանված կարգով պայմանագրի կնքման և համապատասխան ծառայության դիմաց վճարում կատարելուց հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ գիտահետազոտական մեր կենտրոնի մասնագետներն իրականացնում են հուշարձանների վերականգնման նախագծերի համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները՝ ներառյալ դրոնով կամ լազերով սկանավորում, թվային չափագրում, եռաչափ մոդելավորում և այլն:

Հարգանքով՝
Տնօրեն

ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

0010, Երևան, Փ. Բուզանդի 1/3, Հեռ/ Tel/Тел (37410/011) 52-56-18, Ֆաքս /факс/fax (37410) 52-87-97
Yerevan 0010, 1/3 P.BUSAND, 375010, Ереван, ул. П. Бузанда 1/3
Էլ-փոստ /Эл.почта/E-mail: armheritage@gmail.com

The existence of those studies, where the roadmap for the restoration of the monument could be clearly seen, could also help organizations like ours to seek funding for the restoration, because the representatives of the state bodies have decided that the 19th-century oil mill of Dzitkhankov should not be included in the medium-term expenditure program "fixing, repairing and restoring monuments" of the state budget of the Ministry of the ESCS of the RA in 2024-2026.

In Mr. Harutyunyan's answer, it was also mentioned that the certificate made in 1989, floor plan, black-and-white photos can be provided after signing the contract and paying for the service.

In order to understand on the basis of which law and on the basis of which internal documents the fees set for this service are formed, as well as to get acquainted with the price list of all works necessary for monument restoration projects carried out by the specialists of the “Scientific Research Centre for Historical and Cultural Heritage” SNCO, to find out what is the status of the 19th-century oil mill of Dzithankov, which state body is authorized and obliged to preserve and restore the above-mentioned monument, what works have or have not been done in that direction, what logistical, professional, other resources and funds are needed and to what extent, we wrote another application to Mr. Harutyunyan.

<<Պատմամշակութային Ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն>>
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Հարությունյանին
<<Համագործակցային կրթական ծրագրեր>>
հասարակական կազմակերպության
նախագահ՝ Լուիզա Թոփչյանից

Դիմում

Կխնդրեմ ուղարկել համապատասխան օրենքը, առկայության դեպքում <<Պատմամշակութային Ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն>> ՊՈԱԿ-ի ներքին այն փաստաթուղթը կամ փաստաթղթերը, որտեղ ձևակերպված են տեղեկատվական նյութեր տրամադրելու կանոնակարգերը և այդ ծառայության համար սահմանված վճարները: Ինչպես նաև տրամադրել <<Պատմամշակութային Ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվող՝ հուշարձանների վերականգնման նախագծերի համար անհրաժեշտ բոլոր աշխատանքների գնացուցակը:

Իմ նախորդ դիմումի մեջ նկատի ունեի Ձիթհանքովի 19-րդ դարի 7.72.12 ձիթհանը, քանի որ ցավոք, 7.72.11 ձիթհանը չի պահպանվել պետական համապատասխան մարմինների կողմից:

Կխնդրեմ տրամադրել նաև <<Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից հետազոտական աշխատանքները, զեկույցները ներքոնշյալի վերաբերյալ՝

- Ի՞նչ կարգավիճակ ունի Ձիթհանքովի 19-րդ դարի 7.72.12 ձիթհանը:
- Ո՞ր պետական կառույցն է լիազորված և պարտավորված վերոնշյալ կոթողի պահպանության, վերականգնման համար,
- Մինչ օրս ի՞նչ աշխատանքներ են կատարվել կամ չեն կատարվել այդ ուղղությամբ:
- Կոթողի վերականգնման համար ի՞նչ նյութատեխնիկական, մասնագիտական, այլ ռեսուրսներ և միջոցներ են անհրաժեշտ և ի՞նչ չափով:

Կխնդրեմ նաև ներկայացնել կոթողի վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունը:

24.10.2023թ.
<<ՀԿԾ>> հկ-ի նախագահ՝
Լուիզա Թոփչյան

In his reply, Mr. Harutyunyan did not mention on which law and which internal documents the fees set for the service of providing information are formed, he only mentioned the costs:
- one digital copy of the certificate - 7200 AMD (including VAT)
- a digital copy of the conservation zone project (if available) - 9,600 AMD

He also said that there are no studies on the 19th-century oil mill in Dzithankov, it turns out that the organization he leads, which is authorized to carry out such research, did not conduct an appropriate study.

In addition to that answer, it became clear that the biggest customer for such works is the Ministry of the ESCS of the RA. What is understood from this answer, that the initiative should have started from the Ministry of the ESCS, while the Deputy Minister of the ESCS Alfred Kocharyan stated that the medium-term expenditure program "Fixing, repairing and restoring monuments" is formed in accordance with the list of the level of emergency of the monuments compiled in the monitoring results of the employees of the "Scientific Research Centre for Historical and Cultural Heritage" SNCO, as well as in accordance with the policy and priority of the Ministry.
All this just resembles a deadlock.

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT "SCIENTIFIC RESEARCH CENTER OF THE HISTORICAL AND CULTURAL HERITAGE" SN-CO

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА "НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ЦЕНТР ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ" ГНКО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

---

N 01/418 30 հոկտեմբերի 2023թ.

«Համագործակցային կրթական ծրագրեր» ՀԿ
նախագահ ԼՈՒԻԶԱ ԹՈՓՉՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Թոփչյան,

մեր կազմակերպության գիտատեղեկատու արխիվում պահվող մեկ միավոր վկայագրի թվային պատճենի արժեքը կազմում է 7200 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ պահպանական գոտու նախագծի թվային պատճենի արժեքը 9600 ՀՀ դրամ (առկայության դեպքում)։ Նյութերի պատճենները տրամադրվում են համապատասխան պայմանագրի կնքումից և վճարումից հետո։

Ինչ վերաբերում է Ձեր մյուս հարցադրումներին, ապա նշենք, որ յուրաքանչյուր հուշարձանի վերականգնման նախագծի կազմման համար անհրաժեշտ է նախապես իրականացնել մանրամասն ուսումնասիրություն, որը թույլ կտա մասնագիտորեն առանձնանշելու տվյալ հուշարձանի բոլոր խնդիրները, ապա և լուծման ուղղությամբ աշխատանքներ ձեռնարկելու համապատասխան նախահաշվի կազմամբ։ Նշենք, որ հետազոտական նման աշխատանքներին անհրաժեշտության դեպքում կարող են ներգրավվել միաժամանակ տարբեր ոլորտների մասնագետներ (ճարտարապետներ, հնագետներ, երկրաբաններ, կոնստրուկտորներ և այլք)։

Ներկայում նման աշխատանքների ամենամեծ պատվիրատուն ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն է, թեն անհատները նույնպես կարող են հանդես գալ իբրև մեկենասներ և պետության հետ համատեղ ֆինանսավորել անհրաժեշտ ուսումնասիրությունները կամ վերականգնումները։ Կարող ենք վստահեցնել, որ նախարարությունը միայն դրական է տրամադրված այդօրինակ համագործակցությունների հանդեպ։

Ձեզ հետաքրքրող ձիթհանը 19-րդ դարի տեղական նշանակության ուշագրավ օրինակներից է, սակայն ցավոք, առայժմ հիմնավոր ուսումնասիրություններ նշյալ հուշարձանի վերաբերյալ չկան։ ՀՀ ԿԳՄՍ նախարարության համաձայնությամբ գիտահետազոտական մեր կենտրոնը պատրաստ է հաջորդ տարվա մեր պլանային աշխատանքներում ներառել մասնագիտական շրջայց՝ առավել հստակեցնելու անհրաժեշտ քայլերը, սակայն ի սկզբանե պետք է արձանագրել, որ այդ այցը լինելու է ձիթհանի վերաբերյալ առավել թարմ տվյալներ հավաքելն ու անհրաժեշտության դեպքում պետական հաշվառման փաստաթղթերը լրամշակելը։

Միաժամանակ հայտնում ենք, որ ընթացիկ վերականգնվող հուշարձանների, ինչպես նաև հաջորդ տարվա վերականգման աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ կարող եք ստանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից։

Հարգանքով՝
Տնօրեն՝ ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հեռ. 010 526618

Summing up, what we see as a result of more than 1 year of contacts with relevant state bodies. Widespread lack of motivation to solve the problem, avoidance of responsibility.

- **The RA Prime Minister's staff** addressed the issue to the ministries with the authority to solve the problem: Ministry of ESCS, Ministry of Territorial Management and Infrastructures, Ministry of Economy and then simply forgot to be consistent, to see if the problem is solved or not.
- **The Ministry of the ESCS** of the RA, which is the first responsible body for solving the problem, simply showed a passive attitude, ignoring the importance of solving the problem, especially for the local residents.
- **The Ministry of Territorial Management** and Infrastructures of the RA saw the solution of the problem under the jurisdiction of the local self-governing body, Ani Community Hall, by the way,

if the aforementioned community hall had seen the importance of restoring the monument, it would have already taken steps, while even the roads of the village are in a deplorable state.



**- The respective SNCOs** of the RA are waiting for funding to perform their work, here the question arises, don't SNCO employees receive funding and salary for these works from the state budget every month?

- The problem was also presented to the **Prime Minister** of the RA, Nikol Pashinyan, within the framework of the question-and-answer session organized live on November 24, 2023 when the citizens of the RA and compatriots of the Diaspora could send their questions to the Prime Minister in the format of a video message to the WhatsApp number +374 44 900 800, from November 17 to November 23.

Although the question sent by us was not published, it was mentioned by the prime minister, live, that all the questions will be considered by the relevant departments and they will be processed, and the person raising the question will be informed about it through WhatsApp. More than 1 month has passed, but no relevant department has contacted us, although considering the approaches of the state bodies to the problem and lack of specific actions based on them, it would be difficult for them to have anything to add.

https://www.cep-org.am/wp-content/uploads/2023/12/406275134_7284587351572040_4289607977639957346_n.mp4

In the end, it is worth to add that by restoring the 19th-century oil mill of Dzithankov village, not only the historic and cultural monument, which has a secular significance belonging to the 19th-century, would be saved from destruction, but also the village could become an interesting place for tourism.

It is possible to develop a new tourist destination in Armenia, the north-western direction, which would include the settlements of Talin, Dashtadem, Mastara, Dzithankov, Anipemza.




It should be noted that the above settlements have the potential to become really interesting tourist places.













